ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ----- » ---------- 2021թ. N-- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի հոդվածի 2-րդ մասի «զ» կետի 25-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Երևանի սպորտկոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) (հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, գրանցման համար՝ 222.210.01251 /2010-08-05/):

2. Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարային հանձնաժողով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման ընդունումը պայմանավորված և Երևան քաղաքում սպորտի ոլորտի կառավարման համակարգի օպտիմալացման, ինչպես նաև համայնքային ռեսուրսների առավել նպատակային օգտագործման անհրաժեշտությամբ:

«Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է Երևան քաղաքի ավագանու 18.06.2021թ. N122-Ա որոշման համաձայն, գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Բուզանդի 1/3:

Կազմակերպության կանոնադրության համաձայն՝ Կազմակերպության գործունեության հիմնական առարկան ու նպատակները հետևյալն են.

1. Երևանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացումն ու զարգացումը.
2. Երևանի բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումն ու տարածումը.
3. Երևանի ենթակայությամբ մանկապատանեկան մարզադպրոցների մեթոդական աշխատանքերի կազմակերպմանն աջակցումը.
4. Երևանի ենթակայությամբ մարզադպրոցների ուսումնամարզական գործընթացների ուսումնասիրությունների կատարումը և աջակցումը.
5. Երևանում մարզական միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը.
6. Տարբեր մարզաձևերից մարզական կատարելության և բարձրագույն վարպետության խմբերի ձևավորումը.
7. Տարբեր մարզաձերից Երևան քաղաքի հավաքական թիմերի ձևավորումն ու հանրապետական և միջազգային մրցումներում նրանց մասնակցության ապահովումը.
8. Հանրապետական ու միջազգային մրցումների գործուղելուց առաջ Երևանի հավաքական թիմերի համար ուսումնամարզական հավաքների կազմակերպումը:

Կազմակերպության կանոնադրական նպատակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք գրեթե ամբողջապես կոչված են ապահովելու սպորտի ոլորտում Երևանի քաղաքապետի ՀՀ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումը, ինչը, սակայն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի (այսուհետ Բաժին) գործունեության նպատակն է՝ համաձայն Բաժնի կանոնադրության:

Բացի այդ, Կազմակերպության փաստացի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կազմակերպությունը հիմնականում իրականացնում է Երևանում հավաքական թիմերի գործուղումների և ուսումնամարզական հավաքների կազմակերպման գործառույթ: Գործուղումների գործընթացն իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում գործող մարզական կազմակերպություններից ստացված կանոնակարգերն ու հրավերները, որոնցով Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների թիմերն ու Երևան քաղաքի հավաքական թիմերը հրավիրվում են մասնակցելու հանրապետական ու միջազգային մրցաշարերի և առաջնությունների, ներկայացվում են Բաժնին: Վերջինս դրանք քննարկում ու նպատակահարմար գտնելու դեպքում հանձնարարական է ուղարկու
Կազմակերպությանը՝ ֆինանսավորումն իրականացնելու համար: Կազմակերպության տնօրենը ստորագրում է համապատասխան հրաման:Գործուղումից հետո մարզիչը, ում վրա դրվում է ֆինանսական պատասխանատվությունը, Կազմակերպությանն է ներկայացնում ֆինանսական և մարզական տեղեկատվություն պարունակող հիմքերը, որոնք կցվում են Կազմակերպության տնօրենի հրամանին, կազմվում է փաթեթ և պահպանվում «Երևանի սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ում:

Կազմակերպությունը կանոնադրական նպատակներից բխող և փաստաթղթավորված այլ գործառույթներ, ըստ էության, չի իրականացնում կամ իրականացնում է խիստ անբավարար ծավալով:

2021թ-ի հունիս-օգոստոս ժամանակահատվածում Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հետ համագործակցությամբ «UN RCS-COVID MPFT»

ծրագրի շրջանակում իրականացված՝ սպորտի ոլորտում Երևանի քաղաքապետարանի կառավարման համակարգի և մարզադպրոցների գործունեության փորձագիտական ուսումնասիրության շրջանակում ևս հաստատվել է Կազմակերպության գործունեության աննպատակահարմարությունը: Համայնքային ենթակայության մարզադպրոցների տնօրենների շրջանում կատարված հարցման համաձայն՝ ուսումնամարզական գործընթացը կազմակերպելիս նրանց միայն 7,9 % -ն է համագործակցում Կազմակերպության հետ:

Կազմակերպության 2021 տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսվել է սուբսիդիա 56 831.6 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով՝ 26 746.8 հազ. դրամ, միջոցառումների(գործուղումներ) գծով՝ 26 599.3 հազ. դրամ: Կազմակերպության հաստիքացուցակը կազմված է 16 անվանական հաստիքներից՝ վարչական 9 միավոր հաստիք, միջոցառումների կազմակերպամ և Երևան քաղաքպ հավաքական թիմերի ձևավորման բաժին՝ 7 միավոր հաստիք:

Նկատի ունենալով Կազմակերպության գործունեության անարդյունավետությունը և այն, որ Կազմակերպության փաստացի իրականացրած գործառույթները, համաձայն իր կանոնադրության, պետք է և կարող է իրականացնել անմիջականորեն Բաժինը, Կազմակերպության հետագա գործունեությունը համարվում է աննպատակահարմար:Ուստի՝ համայնքային ռեսուրսների նպատակային օգտագործման և սպորտի բնագավառում կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով սոփյն նախագծով առաջարկվում է լուծարել կազմակերպությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ